

թիւնից ու բարօրութիւնից է միայն: — Եւ թէ ամեն սրտերը վառվում են քաջութեան սուրբ կրակով և հայրենիաց սիրոյն անձնանութիւնով. Եթէ որ ամեն մի մարդ օրինակ է տուլիս իւր մեծաւորներին և իշխաններին՝ հնազանդ լինելու, իւր եղբայրներին հաւատարիմ, նրանց հետ միաբան ու հաշա ապրելու իրանց ներքին կեանքի մէջ, ընտանեկան կեանքի մէջ էլ օրինակ է տալիս աշխատասիրութեան և վարք ու բարքի անսայթաք և անթերի մաքրութեան, ամենքն էլ փրկուած են:

Աստուած իմ և երկնաւոր Թագաւոր, որ Քո արած դատաստաններիդ մէջ մեծ ես, Քո մեզ համար սահմանած վիճակների մէջ էլ իմաստուն և բարերար. երանի կրնէր թէ, որ բաւական իմաստուն և բաւական քաջասիրտ լինէի և օրինակ կ լինէի ուրիշներին արդարութեան, ազնուասրտութեան և քաղաքական առաքինութիւնների: Ո՛չ, Քո շնորհքիցդ և օգնութիւնիցդ մի զրկիր ինձ, որ իմ կամքս ապարդիւն ու մեռած կամք յինի ու չմնայ: Քո սուրբ հոգւոյ զօրութիւնը կեանք ու կենդ անութիւն առյ ինձ ամեն մի բարի բանի համար. ամէն:

Գ. Ա. Ա.

### ԿՐՈՒՆԻ ԴԱՍԱՑՈՒՈՒԹԻՒՆ

Ծխական — Եկեղեցական առաստիքաններս:

Նոր ծրագրով կրօնսաւոյցի վերայ դրվում է խիստ մեծ պարտաւորութիւններ, որ և միայն այն ժամանակ կը կարողանայ կատարել, երբ որ լաւ հասկանայ, թէ ինչ տարբեր դիրք ունի կրօնը միւս բոլոր ուսմունքների կարգի մէջ: Եթէ ուսուցիչը աւանդում է մի ուրիշ աւարկայ՝ զոր օր. լեզու, թուարանութիւն, երգեցողութիւն կամ այլ ուսմունք, նա այնպիսի քան է աւանդում աշակերտին, որ նորան տակաւին յայտնի չէր, որ իսկապէս նորա խելքի ու մոռքի համար անծանօթ նորութիւն է: Այս տեղ գլխաւոր խնդիրն է առասուցանել, այսինքն հաղորդել նոր տեղեկութիւն, նոր հմտութիւն, նոր կանոն,

մատչելի անել և մերձեցնել աւանդելի նիւթը աշակերտի հասկացողութեան, հարստացնել սորա ունեցած գաղափարների և ծանօթութեանց պաշարը: Բայց կրօնը չը պէտք է հոմարուի բոլորովին նոր և օտար աւարկայ մանկան համար. նորա հռգեկան կենաց մէջ չեն պակտառմ հաւատոյ և բարոյական սերմերը, Աստուծոյ պատկերը արդէն տպաւորած է նորա հռգու մէջ, որի պատուէրները նա հասկանում է իւր մատաղ խղճի ազգումներով. ծննդեան օրից նա սնուել է բարեպաշտ ծնողաց դաստիարակութեամբ քրիստոնէական ոգով և բաւական ընտելացած է քրիստոնէական ծեսերին և բարեպաշտ կան սովորութիւններին: Աւսուցչին մնում է միայն, որ մանկան հռգու մէջ սերմանած հաւատաքը աւելի բարգաւաճեցնէ, և ծաղկեցնէ, նորա բարոյական և կրօնական զգացմունքը ողջախոչ կերակրով սնուցանէ և զարգացնէ, նորա միտքը պարզէ և լուսաւորէ, այսինքն հասկացնէ այն՝ ինչ որ նա ուրիշներին նայելով և անգիտակցաբար նմանելով է կատարում: Հետեւապէս ուսուցչի գլխաւոր խնակը այն չի կարող լինիլ, որ կուտակէ և շատացնէ աւանդելի ծանօթութիւնները, այլ այն, որ նորա ամէն մէկ դասից՝ իւր աշակերտը վաստակէ մի բարձր միաք, մի ազնիւ զգացում գէպի կրօնը, մի առաքինի ձգուում, որով որ հնար կը լինի մանկան բարոյական և կրօնական շինութեան հաստատութիւնը: Մասնաւորենք այս խընդիրը ըստ բաժանմանց և դաստանց:

Ա. Բ. և Գ. բաժանմունք կամ Առաջին դասագունդան.

Ծրագրից յայտնի է, թէ այս դաստան մէջ մանուկները կրօնից սովորում են՝ ա) աղօթքներ, շարականներ, և այլն բերան սերտելով, բ) եկեղեցական տօների բացատրութիւն հանդերձ ընթերցանութեամբ ի Ս. գրոց, գ) եկեղեցու մասանց, զարդերի և զգեստների մասին կարեւոր տեղեկութիւններ, դ) պատարագի արտադրողութիւն:

Երբ որ ուսուցիչը սերտել է տալիս գրոց բարբառով շարագրած աղօթքի կամ մի հատուած շարականից, ելքերեց, մուլդիներեց,

նա միայն չը պէտք է աշխատէ, որ մանուկները անգիր ա-նեն բառերը և քաղեն լոկ նոցա արտաքին իմաստը, այլ նա պէտք է զարդեցնե մանկանց մէջ հենց այնպիսի բարեպաշտական սէի, որի արտայայտութիւնը կազմում են նոյն իսկ ուսանեալ բառերը:

Այսպէս էլ եկեղեցական տօներին պատշաճ Արքադան և աղջային եկեղեցական պատրութեան կտորներ աւանդելիս՝ ուսուցիչը չը պէտք է շատանայ լոկ միայն պատմական իրողութիւնները ծանուցանելով, այլ որքան որ հնարաւոր է ցոյց տայ նոցա նշանակութեան քրիստոնէական հաւատոյ կամ մեր փրկութեան շինութեան համար: Այս ձեռով կը բացատրուին նաև եկեղեցու մասերը, զարդերը և այլն, զոր օր. սեղանը (զատկի պատարագ), սկիհը (խորհրդաւոր ընթրիք), աւազանը (Քրիստոսի մկրտութիւն) և այլն:

Հաւատայ հանդանակի և «որիշ պատուելների բացատրութեան ժամանակ՝ նա պէտք է ցոյց տայ նոցա սերտ կազը մարդկային ազգի բարեպաշտութեան հետ, որքան որ այս հասկացնել կտրելի է արդէն մանուկներին յայտնի եղած սրբազան և ազգային եկեղեցական մոնիր պատմութեանց իմաստներով, արտայոյտութիւններով, կամ պէտք է նոյն պատուելները լուսաբանուին նոյն իսկ մանկանց բարոյական կենցաղալարութեամբ, որքան սր այս վերջինը երեւում է իրանց աղօթելու սովորութիւնից, վարքից, ներքին խղճի շարժումներից և բարեպաշտական զգացումից:

Այդ բոլոր մասերում դասաւորութեան եղանակին վերաբերեալ գլխաւոր հրահանգը այս պէտք է լինի.

1) Աղօթք, շարական և մեղեդի (կամ սոցա ծաղկաբաղը) դիւրամատչելի աշակերտաց, սերտել տալուց առաջ՝ ուսուցիչը պէտք է բացատրութիւններ տայ զրոյցի ձեռով, այնպէս որ մանուկի համար դա մի նախադուռ լինի այն բովանդակութեան գլխաւոր իմաստի մէջ լաւ թափանցելու համար, որը որ նա պատրաստ է անգիր սերտելու, ուր ուսանելի աղօթքը կամ միւռ յիշատակած հատուածները ինքնին պէտք է բղիսն զրուցատրութիւնից, որպէս նոցա բնական հեղեմունք: Այս առե-

սակ զրոյցների Նէ-Ն պիտի համարութին կամ՝ մանկական և ընտանեկան կեանքից առնուած դէպքեր, կամ՝ որբազան պատմութեան և սրբոց վարուց փոքրիկ օգատմութիւններն, իսկ նոյն իսկ աւրաքել առաջ այսպէս պէտք է կատարուի. Ա) ուսուցիչը համապատասխան կտորը ամբողջութեամբ կարգում է ի հարկէ իմաստալից առսպանութեամբ և անարուեստ ջերմ՝ զգացմամբ. Բ) ցոյց է տալիս գլխաւոր շեշտելի իմաստները. Գ) բացատրում է դժուար ըմբռնելի բառերը և դարձուածները, բայց աւելի ամբողջ նախագասութիւնները՝ քան ամէն մէկ նուրք մանրամասնութիւնը, այսինքն թարգմանում է գլխաւոր իմաստը և ոչ թէ բառացի. Դ. բազմայեղանակ հարցափորձ է անում ստուգելու համար, թէ արգեօք աշակերտները ո՞րքան ճշառութեամբ են ըմբռնել թէ զրոյցի նիւթը և թէ սերտելու հատուածի բառերն ու ասութիւնները. Ե) Հարցմաւնքները հետզետէ աւելի ընդհանրացնում, ամփոփում և համակարգում է. Զ) այսպէս ամէն մէկ մաս նախալարաստելուց յետոյ՝ ինքը կրկին անդամ միւ և նոյն մասը արտասանում է և իւր ասութեան օրինակով աշակերտներին սերտել է տալիս դաստիառնում. և վերջապէս ամենայն յտջորդ մաս՝ միշտ նախորնթացի հետ ևս միացնելով՝ ամբողջ նիւթի սերտելուն լրումն է տալիս. Է) Գործը այսպէս դիւրացնելուց յետոյ միայն՝ ուսուցիչը կարող է պատուիրել աշակերտներին, որ իրանց ուսածը այսուհետեւ աւելի լաւ կրկնեն նաև դանը, բայց այնպէս կանոնաւոր արտասանութեամբ, ինչպէս որ օրինակն է եղել:

2) Տօների պատմութիւնները աւանդելիս՝ ուսուցիչը կրկնել է տալիս աւուր պատշաճի սերտածհատուածները կամ աղօթքները, ինքը կարգում և բացատրում է ի լուր աշակերտաց նոյն աւուր ընթերցուածքները, ինչպէս որ նալոյն մէջ կարգուած են, և այնպիսի բացատրութիւններ է տալիս աշակերտներին, որ նոցանով մի նախապատրաստութիւն ստանան աշակերտները Հայաստանեայցս Ա. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու արարողութիւնները մասամբ հասկանալու համար, ինչ որ յետոյ (երկրորդ գասատան մէջ) աւելի մանրապատրաստութիւններով պիտի ուսանին, ցոյց տայտվ նոյն պատմութեանց մէջ բովան-

գակած հաւատոյ ճշմարտութիւնները և բարսյական խրատները, նոյնպէս և այն տօները, պահքերը և եկեղեցական պաշտամունքներն ու ծեսերը, որոնք նոյն տօնի յիշատակութեան համար են սահմանուած։ Տօների բացատրութիւնները այն կարգով պետք է տրուին, որ միշտ առաջիկոյ տօնը աշակերտների համար լուսաբանուած լինի, բայց որովհետեւ մի և նոյն տօնը՝ երեք տարուայ ընթացքում՝ երեք անգամ բացատրութեանց առիթ կը գառնայ, հասկանալի է, որ բացատրութեան գլխաւոր և հեշտ մասը սկզբում պէտք է տրուի, իսկ դժուարագոյնը՝ նախընթացի կրկնութեամբ հանդերձ՝ վերջերում։ Նմանապէս և նիւթի ընդարձակութիւնը ժամանակի տեսողութեանը պէտք է համեմատուի, զոր օր, առագ շաբաթի ուսանելիքը վաղորօք պէտք է աւանդուի մեծ պասի սկզբներից, ապա թէ ոչ՝ յետոյ ուշ կը լինի և գործի լրումը չի հասնի։

Որքան որ միջացները ներեն, դասերի ժամանակ ուսուցիչը պէտք է գործ ածէ քարտէզներ, պատկերներ և ուրիշ այսպիսի իրազննական նպաստից միջոցներ։

Դ. և Ե. բաժանմունք էամ Երևանի դաստիարակութանուան։

Հին կոտարաններ պատճեններն նախ և առաջ այն պէտք է ցուցանէ, թէ ինչպէս կրկին աստուածպաշտութեան տեղի տուաւկուապաշտութիւնը փոքր առ փոքր, և մարդկային ազգը ինչպէս պատրաստուեցաւ Փրկչի գալստեան։ Նորա մէջ ուրեմն պէտք է արտափայլի ոչ այնքան շրէից տաղաւական պատմութիւնը, որքան որ հաւափոյ պատմութիւնը. պէտք է երեխ, թէ այն աւետումը, որով խոստացուեցաւ նախամօր հանդերձեալ ծընունդը, հետզհետէ ժամանակով աւելի և աւելի հաստատվում էր և յայտնութիւն էր ստանում Աստուծոյ ժողովը դեան վիճակի արտաքին ընթացքներում զանազան մարդարէութիւններով և նախագաղափար օրինակօք, այն պատմութիւնը զգալի պէտք է կացուցանէ, թէ ինչպէս մարդկային ազգի՝ և մանաւանդ հրէից ժողովրդեան՝ կեանքը և օրէնքները միշտ երեան էին հանում մարդու անհուն տկարութիւնը, խոնարհութիւնը և փրկութեան կարօտութիւնը, այսինքն Փրկչի գա-

լրութեան տեսչն և ակնկալութիւնը։ Ընդ նմին հին կտակարանի պատմութիւնը պէտք է սովորցնէ, թէ ինչպէս խորայէլի մէջ հետզհետէ աճեց ինքնահաւանութիւնը, ամբարտաւանութիւնը, անչաղորդութիւնը, արհամարհանքը դէպի օսարը և շրջապատող աշխարհը, և թէ ինչպէս արտաքին թշուտութեանց և ներքին մեծամոռութեան պատճառով՝ նոյն իսկ ակնկալած Փրկչի գալութեան գաղափարը փոխուեցաւ։ և. Մեսիայի կամ հրէից երկրաւոր թագաւորի ակնկալութեան կերպ ստացաւ։ Այս հանգամանքներով հին կտակարանի պատմութիւնը կը լուսաբանէ նոր կտակարանի կամ Աւետարանի բոլյանդակութիւնը, այսինքն նորը հնով կը բացատրուի։

Ապա ուրեմն Հին կտակարանից պէտք է ընտրուին ուելի այնպիսի դէպքեր, որոնք զգալի նշաններ են հանդերձելոց և որոնց մէջ պայծառ կերպով արտայայտուեցաւ ակնկալած Փրկչի մասին կազմած հաւատքը, ուր ամենից տւելի նշանակութիւն պէտք է ստանայ օրէնքի նկարագրութիւնը, որ թէ պէտ իսկական կարապետ էր Քրիստոսի, բայց նեղ և սիալ մեկնութիւններ անելով ծնեց փարիսական աղանդ, իսկ հրէից արտաքին պատմութեան մասնաւոր դէպքերը՝ միայն այնքան կորող են յիշտատակուիլ, որքան որ կարեւոր է եղելութեանց պատմական կապը ցուցանելու համար։ — Սակայն զգուշանալու է, որ Հին կտակարանի պատմութեան բուն նշանակութիւնը, ինչպէս որ վերը նկարագրուեցաւ, չը մթնանայ և չը պօղուի դասատուութեան սխալ եղանակների պատճառով, եթէ զոր օր, մի դէպք պատմուի, առանց խորհրդաւոր ընտրութեան և առանց վախճանական նպատակի, որպէս զի գաղափարների կապակցութիւնները երեան գան, և յանկարծակի այսպէս վեր։ Չաբանենք, թէ « Այդ դէպքը նախագաղափար օրինակ և յարացոյց է այս կամ այն ինչ հանգերձեալ խորհրդաւոր ընտրութեան », դա կը լինի գատարկ խօսք և անօգուտ գաս. կամ եթէ հրէից ազգի պատմութեան մի մեծ դարագլուխ շարունակ պատմուի, առանց յայտնի կացուցանելու. թէ այդքան իրար վերայ կուտակուած դէպքերը արդեօք ինչ նշանակութիւն պիտի ունենան այն հաւատքը զօրացնելու համար, որով որ ժողովուրդը ակըն-

կալում էր հանդերձեալ փրկութիւնը, և եթէ նոյն դարադլու խը կնքելու մտօք մի առանձին գլուխ ես բանանք այս խորագրով՝ «Հաւատալիք» վարդապետութիւնք՝ խորհրդաւոր օրինակք և այլն», առանցվ էլ ոչինչ չենք հրահանգի, այլ աշակերտին կը սովորեցնենք ամենայն բան կցկցել և կարկատել: Աշակերտը ոչ թէ բերան պէտք է սերտէ ուրիշի պատրաստի գաղափարները, այլ իրան մատակարարած նիւթը՝ ինքը պէտք է որոնայ և իւր ուսուցչի առաջնորդութեամբ՝ անձամբ կազմէ իւր հայեացքները և համագումները: Որքան որ պատմութիւնը աւելի դէպի այն ձգտի, որ միայն իրական կեանքը և լոկ կատարուած եղելութիւնները նկարագրէ: Հետևապէս որքան որ խորշէ վերացական դատողութիւններից, այնքան աւելի ազդու և բեղմնաւոր կը լինի նորա ներգործութիւնը լսողի սրտի վերայ: Խակ հրէից ազգի իրական կեանքը կը նկարագրուի: Եթէ Ա. Գրաց պատմութեան կարգը ճշլիւ պահպանէն, եթէ այն տեղ աւաջ պատմածները՝ մենք էլ առաջ պատմենք, և յետոյ պատմածները՝ մինք էլ յետոյ պատմենք: Զոր օր, հրէայք նարմիր ծովը անվանուգ անցնելուց յետոյ՝ իրանց փրկութեան համար օրհնեցին Աստուծոյ բայց հազիւթէ նոքա այն ժամանակ մոտածելիս լինէին մկրտութեան ազատարար նշանակութեան մասին (Ա. Խորինթ. Գլ. Փ.): Խակ եթէ այդպիսի մեկնութիւններ մենք կարգում ենք Աւետարանում, չը մոռանանք և այն, թէ աւետարանիշը կամ առաքեալը ում է տալիս, այդ կարգի բացատրութիւնները. նա խօսում է հաւատացող և անցեալ պատմութիւնը իմացող հրէայի հետ, նա հոգեոր օրինակներով յիշեցնում է գիտունի և հաւատագողի մաքի մէջ անցեալ դէպքերը սրոնց որ լուսաւորում է նոր լուսուսով, խակ օրինակի խորհուրդը միայն այն էր, որ կատարուող դէպքը սուուերով և քողարկութեամբ աւելու մարդկան կարօտած և յուսացած հանդերձեալը: Ուրեմն հարկաւոր է այնպէս պատմել և լուսաբանել խորհրդաւոր դէպքերը, որ լազը նախ ոչինչ պակաս բան չզգայ պատմուածի մէջ, այսինքն որ նորա լարուած հետաքրքրութիւնը միամոռուի և գոհանայ, երկրորդ՝ երբ որ խորհրդաւոր նշան տեսնէ, խելամուտ լինի և նորա ազգեցութիւնը անկո-

բուռատ պահէ իւր սրտի մէջ. մինչեւ որ այնուշետեւ անձամբ հասկանայ նորա խորհրդաւոր նշանակութիւնը, երբ որ այդպէս նսպիագաղափարուած գէպքը՝ արդէն իրականութիւն դարձուեւ յայտնուի. ուստւցչի պատմածի մէջ այնպէս պէտք է ցոլանայ նախագաղափարած իմաստը, ինչպէս որ իրաք բովանդակած էր նոյն խսկ դէպքի մէջ; — Ապա կարեսը է, որ Ս. Գրոց պատմութիւնները միշտ պահպանուին իրանց բարձր վսեմութեան վերայ, առանց մանրակրկիտ իմաստակութիւնները մէջ դր խառնակելու. Ս. Գրոց պատմութիւնները միայն կրօնական զգացմունք զարթեցնելու համար են, ամենայն բանաւորական խորհրդածութիւն, ամենայն ճիգ մեր տկար իւելքով Աստուծոյ խորհրդադների մէջ թափանցելու, ամենայն ձգտում՝ մեր խակ չափով և խծբելով սուրբ նահապետների վարք ու բարքը չափելու. . . յի շահեցնի ոյդ զգացմունքը փոխանակ մեր ձանձրալի սրամութիւնները փորձելու. Ս. Գրոց պատմութիւն լսողը պէտք է միայն հոգւով տանջուի, երբ որ տանջուած է տեսնում մեծ նահապետներին, և փառաւորուի՝ երբ որ Աստուծոյ ընտրեալ մարդոց վեհ փառաւորութիւնն է տեսնում. Խելքով չը պէտք է բռնաբարուի սիրով, որպէս զի նորա մէջ չո խեղդուին բարի զգացումները: Զոր օր. Յովիսէփի՝ Յակոբ նահապետի որդւոյ պատմութեան ժամանակ պէտք է միայն նկարագրուի: թէ եղբայրները Յուգայի խորհրդով նորան վաճառեցին արծաթի համար, թէ նա տանջուեցաւ բանոի մէջ, ըայց այնուշետեւ ինքը ազատեց իւր չարագործ եղբայրներին սովի սոսկալի տանջանքներից, այս պատմութեան տպաւորութիւնը չը պէտք է թուլացնել ոչ մի տեելորդ իմաստակութիւններով: — Նոյնը պէտք է ասենք եւ մարգարէութեանց մասին: Եթէ Քրիստոսի մասին եղած մարգարէութիւնները աշակերտներին ծանօթացնելու մտօք՝ չոր ու ցամաք կերպով թուենք նոցանից գլխուորները և պատուիրենք աշակերտներին, որ նոցացուցակը անդիր սերտեն, — անշուշտ ծածուկ կմնայ Հոգւոյն սրբոյ ներշնչութեան աստուածային զօրութիւնը, որ մարգարէութեանց մէջ կայ: Բայց ի հարկէ այլ տպաւորութիւն կը գործէ մի և նոյն մարգարէութիւնը. եթէ նոյնը յիշատակուի

համապատասխան առթով և իւր տեղը, այսինքն երբ որ հարկաւոր մանրամասնութիւններով նկարագրենք այն կենդանի դէպքերն ու անձինքները, որոնց եզելութեան և կենդանութեան ժամանակ որ արտասանուել է նոյնը, այդպէս աշակերտների տպաւորութիւնը գուցէ ոչ մի բանով պակաս չը լինի, քան ինչ որ զգացել են ժամանակակից հանդիսականները. նոքա իւելամուտ կը լինին, թէ արդեօք ի՞նչ պէտք է նշանակեն մարդարէի խորհրդաւոր գուշակութիւնները և յանկարծ յետոյ շատ բան աւելի կը հասկանան, երբ որ նոքա սկսեն և այն գէպքերը ուսումնասիրել որոնց վերայ որ կայուրուեցաւ մարդարէութիւնը: — Նատ օգտակար է Սրբազն պատմութեան անձանց և գէպքերի բարոյական նշանակութիւննը՝ խրատի ձեռվագդու կացուցանել աշակերտների առաջ, սակայն հարկաւոր է, որ այս գեղեցիկ նպատակի իրագործութեան եղանակը նոյնպէս յարմար լինի: Առ հասարակ սովորութիւն է գարձել մի պատմութեան վերջը ասելու. « Ահա մի օրինակ ուղղամտութեան, բարութեան, հիւրասիրութեան, հաւատոյ, համբերութեան եյլն: » Հետը մի քանի դրուատներ կարդալով այդ առաքինութիւնները գովելու համար, երբեմն ևս ապացուցանելով նոյն բարութիւնների օգուտը և նշաւակելով չարութիւնները: Այս ամենը զուտ ճշմարտութիւններ են, բայց ափսոս որ ճշմարտութիւնը ևս կորցնում է իւր բարերար ազգեցութիւնը, եթէ աշակերտներին մատակարարվում է անշահ եղանակով: Խրատներ ճարդարելաւ, հիւութը և յեւթը ճէռնուց հենց այն հնարն է, որով որ ատելի և արհամարհելի է դառնում նոյն իսկ խրատը: Մինչդեռ Սրբազն պատմութեան եզելութեանց բարոյական իմաստը արգէն ինքնին փայլում է նոյն իսկ եղելութեանց մէջ, և ուրեմն բաւական է միայն, որ սոքալաւնկարագրուին, և սոքա իրանց տպաւորութիւնը միշտ կը գործեն: Հարկաւոր է անպանոյն կերպով պատմել այս կամ այն անձի կենանքը, թիւնի որ նա կատարուել է, այս վախճանաւ բաւական է բնադրչ պատմութեան կարգը, ձեն ու եղանակը պահպանել, այնուհետեւ աշակերտը կը կարողանայ ինքը անձամբ կարդալ իւր անաշառ վճիռը, լսելով իւր սրտի և խղճմտանաց

թելադրութիւններին, նախան մարգարէն ուղղակի չը նշանակեց և չը խրատեց Դաւթին, այլ կեանքից քաղած մի հասարակ գէպք պատմեց (Բ. Թագ. գլ. ԺԲ.). իսկ այսպէս դիմօք խօսելու հետեւանքը այն եղաւ, որ Դաւթի հոգու մէջ յարոյց սրտմը-տութեան ալէկոնութիւն յարագործի դէմ, բայց երբ որ հասկացրեց, թէ այդ յարագործը ինքը Դաւթին է, առ ի խօրոց սրտի զղաց իւր յար արարքը: —Այսպէս էլ տարակոյս չըկայ, թէ մանուկը արդարութեամբ կը դատէ Յակոբի վարժունքը եւ լաւութեան եւ վատութեան կողմից, երբ որ տեսնէ, թէ նորա մայրը դառնացած էր աւագ որդւոյ նաւի կանանցից (Մնդ. գլ. ԻԶ.), երբ որ իմանայ, թէ ծերունի կոյր հայրը, իւր որդուց խարուելով՝ սարսուռ զգաց և տրտմեցաւ (գլ. ԽԵ.): Այս տեղ կարիք չը կոյ, որ ուսուցիչը իւր լսողների սիրտը լցնէ արուեստակեալ զգացումներով, քանի որ ինքը եղելութիւնը այնքան գորովալից և որտաշարժ է, որ հազար տարիներ անցնելուց յետոյ և՛ դարձեալ իւր ազգեցութիւնն է գործում մարդկանց վերայ:

Որպէս զի Ա. Գրոց պատմութեանց խրառը միշտ իւր բարձր վսեմութիւնը պահպանէ, ուսուցիչը պէտք է պատմելիս զգուշանայ, որ ոճիրների մանրամասն և սրտագրաւ նկարագրութիւններով յը գայթակղեցնէ մանուկների միամիտ սիրտը, նոցա չը հազորդէ գաղափարներ՝ որ նոքա խակ մոքով կարող են ըմբռնել, չը թուլացնէ նոցա բարոյական զգացմունքը՝ որ արդէն վառուել է, չը նսեմացնէ նոցա աչքում արդար և Աստուծոյ սիրելի մարդոց սուրբ պատկերը (Յակոբ, Դաւթի, Սողոմոն): Այդ տեսակ իրողութիւնները նա պէտք է կամ բնաւ չը յիշատակէ, կամ նոցա մասին շատանայ հարեանցի ակնարկով միայն, այլ ընդհակառակն մանկանց միտքը աւելի զբաղեցնէ բարեպաշտ մարդկանց անէեղծ զղջումներով եթէ յանձնել են. նոցա ջերմեառնդ հաւատով և յուսով, և ստացած ողորմութիւններով ու թողութիւններով: Զոր օր. Հարկ յը կայ մանուկներին պատմել Դաւթիթ թագաւորի ժամանակ Աստուծոյ ձեռքով ժողովրդեան սատակումը աշխարհահամարի պատճառով (Բ. Թագ. ԻԴ, Ա. Մնաց. ԻԱ,). նոքա կարող են ծուռ գա-

զափար կադիսել եթէ լսեն, Աքիս մորգորէի խօսակցութիւնը Յերգուվամի հետ (Գ. Թագ. ԺԱ.) երբ որ ամենայն մանրամասնութիւններով իմանան Սաւուղ. Թագաւորի ընտրութիւնը և յետոյ մերժումն Աստուծոյ երեսից, նոցա Համար վտանգաւոր կարող են լինել Յովլէփի և Պէտափրէսի կնոջ, Դաւթի և Քերսաքէի, սովորմական մեղքի. Սամիխոնի կենաց և ուրիշ այսպիսի պատմութիւնները:

Արգէն տպագրուած ծրագիրը այնպէս է կազմուած, որ այսպիսի աւելորդ պատմութիւնները միջից խնամով հանուած են, բայց և այնպէս ուսուցիչը լաւ պէտք է իմանայ այն ոկրգունքները, որոնցով որ պէտք է առաջնորդուի ծրագրի մէջ մնացած մասերում: Մանաւանդ մեր դասագրքերը զգուշութեամբ պէտք է գործածուին, որոնցից նոյն իսկ լաւագոյնը զերծ չէ այսպիսի թերութիւններից, ուստի ուսուցիչը ոչ թէ բարացի կերպով պէտք է սովորեցնէ նոցա ամրողջութիւնը, այլ հարկաւոր քաղցւածք հանել նոցանից և ծրագրի պահանջներին ամենաճիշդ կերպով համապատասխանեցնէ նոյն այդ ընտրութիւնը:

Հին կոտակարանի պատմութիւնները ուսուցանելիս՝ ոչ միայն պէտք է բնագրի պատմական կարգն ու ձեզ պահպանուի, այլ հարկաւոր է երբեմն նոյն իսկ ամբողջ համուռածներ կարդալ այն բնագրից որոնց, իմաստների և զգացմանց բարձրութիւնը՝ ուսուցյի բանաւոր պատմուածքի մէջ կօրչում կամ թուլանում է. այսպէս են օրհներգութիւնները և մարգարենների խիստ յանդիմանութիւնները, նատ օգտաւէտ է նմանապէս, որ աշակերտաները քերան առնեն Ա. Գրեից հանած կարճ բարոյական ասացուածները, իբրև հաստատութիւն և վկայութիւն պատմուած դէպքի բարոյական բովանդակութեան համար: Ա. Գրոց աշխարհագրութեան հետ աշխարհութիւնները հետզհետէ պէտք է ծանօթանան համբարձատասխան պատմութիւնները ուսումնասկարելիս: Մանկանց պէտք է հալրդաշտին նոյնպէս և ժամանակագրական տեղեկութիւններ բայց և հարկէ միայն ամենակարեն թուականները, որպէս զի մանկանց փափուկ յիշողութիւնը զուր և մնօգուա կերպով չը հանրարեանուի:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԻՆՉ որ ասուեցաւ Հին կը տակարանի պատմութեանց մասին, նոյնը մեծ մասով պէտք է հասկանալ Նոր կտակարանի մասին և ու:

Եթէ Հին կտակարանը վերը նկարագրած իմաստով գառ տրուի, այն ժամանակ մանուկները լաւ պատրաստուած կը լինին՝ Քրիստոսի վարդապետութիւնները հասկանալու համար, այն ժամանակ զգալի կը դառնայ Աստուածածին Մարիամ կուսի օրհներգութեան կենդանի զօրութիւնը, որ նա արտասանեց Զաքարիայի տան մէջ Եղիուաբէթի առաջ (Ղուկ. Ա.) այն ժամանակ հասկանալի կը լինի փարիսիցու այն խստաշունչ կարծրամիտ, անձնահաճոյ ոդին, որ ի խաչ հանեց Քրիստոսին: Հին կտակարանի պատմութիւններով մանկանց հոգու մէջ կը տպաւորուի Սրարիչ և նախախնամող Աստուածոյ պատկերը նոքա կը բանան նա և մարդկային աղջի անկման խորութիւնը և Փրկչի հարկաւորութիւնը և միջնորդութիւնը մարդկային ազատութեան համար, — այնպէս որ աշակերտների մոքի մէջ Փրկչը կը նկարուի նախ՝ իբրև շնորհք և պարգև մարդասէր Աստուածոյ, և երկրորդ՝ իբրև ամբողջ մարդկութեան ապաւէն և յօյս:

Այսուհետեւ ևս գաղափարները թերի կերպով լը պէտք է կազմուին: Նոր կտակարանի պատմութիւնները ոչ միայն պէտք է ծանօթացնեն Յիսուս Քրիստոսի կենաց համարմանքները, այլ և նորա աւետարանն ու վարդապետութիւնը, այսինքն մանուկների ու շագրութիւնը պէտք է դարձնել ոչ միայն Փրկչի աղետուալից կենաց Եղելութիւնների և նորու հրաշագործութիւնների վերայ, այլ և նոքա պէտք է լաւ ծանօթութիւն ստանան նորա առակաւոր խօսակցութեանց մասին: Մանուկները այնքան տեղեակ պէտք է լինին Քրիստոսի վարդապետութեան, որ հաստատապէս գիտենան, թէ ինքը մեր Ցէր Յիսուս Քրիստոսը յալտնեց մեզ իւր Աստուածաւային պոտիւը, և թէ Քրիստոսի չարչարանքն ու մահը մի միայն հրէից ժողովրդապետների նախանձով չի բացատրուի, այլ թէ նա ինքը յօթար կամօք զոհեց իւր անձը մարդու փրկութեան համար: Նոքա պէտք է գիտենան, թէ Քրիստոնէական բարոյական օրէնքը միմիայն տասնա-

բանեայ պատգամը չէ, և թէ երանութեանց պատգամները սոսկ բարոյական ասացուածներ չեն, այլ թէ նոքա են իսկական օրէնքներ ճշմարիտ քրիստոնէի համար, Եւ ահա նոր կտակարանի պատմութիւնները ուսումնասիրելիս՝ աշակերտը պէտք է անշռւշտ յիշէ ուսուցչի առաջնորդութեամբ Հին կրտակարանի մարգարէութիւնները և խորհրդաւոր օրինակները և այդպէս ըմբռնէ երկու կտակարանների կապակցութիւնը:

Խոկ միւս ամենայն բանում նոր կտակարանը այնպէս պէտք է դաս տրուի, ինչպէս որ բացատրուեցաւ Հին կտակարանի դասաւութիւնը:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ. Որպէս զի նիւթի բաղմութիւնը չը շփոթէ մանկան միտքը, աշակերտը դիմաւորապէս մի բան պէտք է լաւ ըմբռնէ, այն է թէ ինչպէս քրիստոնէութիւնը, որ մի եկամուտ կրօնն էր հեթանոս հայի համար, հետզհետէ մուտք գործեց այդ ազգի մէջ, զարգացաւ և հաստատուեցաւ, թէ ինչպէս առաքելական Ա. Եկեղեցին անկորուստ իբրև ժառանգութիւն հասել է մեզ՝ մեր նախորդներից, միշտ խորշելով աւելորդ Եկեղեցական վէճերից, հերձուածներից և աղանդներից, թէ ինչպէս անկախ մայրենի Եկեղեցին հետզհետէ ձեւացրեց իւր սեպհական Եկեղեցական կազմուկերպութիւնը և կառավարութիւնը:**

Եւ որովհետեւ Եկեղեցական պատմութիւնը և նոր կտակարանի պատմութիւնը ծրագրով Ե. բաժանման նիւթ են կազմում, բարւոք է որ տարուայ սկզբին բոլոր գասերը նուիրուեն միայն նոր կտակարանին, և ապա թէ գասերը բաժանուին Եկեղեցական պատմութիւնը սկսելու՝ խոկ նոր կտակարանը շարունակելու համար մինչեւ տարուայ լրանալը:

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱԳԵՑՈՒԹԻՒՆ. Այս ուսումնիքը աւանդելիս՝ կրօնուսոյցը պէտք է հոգա, որ աշակերտները տարակոյս չունենան, թէ նոյնը գլխովին նոր և օտար բան չէ նոցա համար, թէ նա չէ մի ժողովածոյք վերացական կանոնների և հաւատոյ գաւանանքների, որոնք իբր թէ լոկ միայն բերան սերտելու համար են և ուրեմն ոչինչ գործնական վերըերութիւն յունին աշակերտաց տնձի համար, այլ ընդհակառակ դո-**

քա մի և նոյն քրիստոնէական կանոններ են, որ Հայաստան-  
եայց Ս. եկեղեցին դաւանում է, որ ամենայն հայի սրտի մէջ  
աղդում և մեծին ու փոքրին առաջնորդում է, որդէս զի իւ-  
րաքանչիւրը ըստ այնմ՝ վարէ իւր բարեպաշտական կետնքը,  
ինչպէս որ իրանք աշակերտներն էլ ի մանկութենէ վարժուած  
և արդէն ծնողական տան մէջ ընտելացել են նոյն կետնքին,  
և որ վերջապէս Սրբազն և Եկեղեցական պատմութեան  
գէպքերից և իմաստներից ևս միշտ մի և՛ ոյն են սովորել և  
դարձեալ ուզուած են, Կրօնական տեսակէտից խիստ կարեար  
ոյս ուսումը՝ իցէթէ այսուհետեւ այնպէս չոր ու ցամաք չը  
թուի մանուկներին, թերես այնպէս վերացական և տաղտկա-  
ցի չը դառնայ դպրոցներում, ինչպէս որ դժբախտաբար մին-  
չև այս որ նոյն ուսման արդիւնքը երեւացել է, եթէ ի հարկէ  
աշակերտը զգայ և իրօք համոզուի, թէ իրան աւանդում են  
մեր Տէր Ծիսուսի և Փրկչի վարդապետութիւնը և ոչ թէ մի  
նոր բան այն Փրկչի, որ իրան արդէն ծանօթ է ուսումնարա-  
նի նախընթաց ժամանակներից, որի մասին շատ անդամ լսել  
է և շատ բան սովորել է, և որին միշտ աղօթել է տան և  
Եկեղեցու մէջ։

Որպէս զի դպրոցում աւանդելի բոլոր կրօնական ուսում-  
ները մի միութիւն կազմեն մանկան սրտի մէջ և որպէս զի  
քրիստոնէական վարդապետութեան ուսումը կենդանութիւն  
առնու նոցա մէջ, կրօնուսոյցը միշտ աշակերտին յիշեցնում է  
երբեմն Սրբազն պատմութեան իրողութիւնները, երբեմն  
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ աստուածպաշտութեան արարո-  
ղութիւններն ու ժամասացութիւնները, որոնք որ կապ ունին  
ուսումնասիրելի դաւանութեան հետ։ Եւ մի և նոյն է, թէ ար-  
դեօք կրօնուսոյցը դասի սկզբում կը յիշեցնէ կանխաւ ու-  
սածները և այն տեղից եզրակացնելով հանել կը տայ այս կամ այն  
դաւանաբանական մասը, այս կամ այն բարեպաշտական կա-  
նոնը. Թէ նախ և առաջ դաւանական մասը կը հաղորդէ աշա-  
կերտին և ապա միայն նորան կը յիշեցնէ և այն ծանօթ իրո-  
ղութիւնները Սրբազն պատմութիւնից, Ս. Գրոց վկայու-  
թիւնները, աղօթքները, ժամերգութեան արարեպութիւնները,

որսնցով որ հաստատվեմ է նոյն դաւանաբանական և բարոյական ուսումնիք:

Աւելի ևս գրաւիչ անելու համար՝ կրօնուսոյցը աշակերտների առաջ կարդում է Ս. Գրքից այնպիսի հատուածներ, ուր որ միակատար, պայծառ և կենգանի կերպով բացատրուած է այս կամ այն դաւանաբանական վարդապետութիւնը: Զոր օր աշխարհքի ստեղծագործութիւնը պատմելիս, նա կարդում է (Հարկաւ բացատրութեամբ) ՃԳ. սաղմոսը, իսկ Աստուծոյ ամենաբարութիւնը ուսուցանելիս՝ Ն. սաղմոսը: Առ Կորնթացիս առաջին թղթոյն ՃԳ. գլուխը մանուկներին կը լուսաբանէ մեռելոց յարութեան վարդապետութիւնը և ցոյց կուտայ այդ դաւանութեան կապակցութիւնը: Քրիստոսի յարութեան հաւատոյ հետւ նոյն թղթի ՃԳ. գլուխը նոցա կը բացատրէ այն ուսումը, որ խօսում է սիրոյ նշանակութեան մասին քրիստոնէի կենաց համոր:

Դաստուութեան եզանակը ըստ ամենայնի հրահանգիչ պէտք է լինի, այսինքն պէտք է կազմուած լինի ուղեցոյց և առաջնորդող հարցումներիլ, որոնց պատճառով բոլոր աշակերտները պէտք է մասնակցեն ուսումնասիրութեան ենթակայինդրի լրեծման մեջ: Բայց հրահանգիչ հարցմանց ուսումը չըպէտք է շփոթել, հին հարցուպատասխանի ՃԵ.Ի հետ, որ ճրգնում է հաւանութեան չէ հասել: մանաւանդ, չը պէտք է շփոթել այնպիսի հարցմանց հետ, որոնք նախընթաց հալցումներից անկախ գործի նոցա հետ ոչինչ տրամաբանական կապ չեն ունենում: Քանի որ հարցուպատասխանական (կատիշիտական) ՃԵ.Ը պատճառ է գտունում հարցերն ու պատրաստի պատասխանները անիմաստաբար անգիր անելու և աշակերտներին սովորեցնում է լոկ անկառ մոգեր արտասանելու, կրօնուսոյցը պէտք է աշակերտներից պահանջէ, որ նոքա միշտ ոճով և կապակցած պատասխաններ տան:

ԿԱՐԳ Ա.ԱՏՈՒԱԾՊԱՇՑՈՒԹԵԱՆ, Այս հրահանգութիւնը իւր գործնական նշանակութեամբ պէտք է նկատուի: Կրօնուսոյցը չը պէտք է մուանայ, որ այս հրահանգութիւնը աւանդում է

փոքրիկ մանուկներին, որսնցից մեծ մասը շատ շղւու պէտք է բոլորովին թողնէ գպրոցական նոտարանը։ Նա ուրեմն աւանդում է այնպիսիններին, որոնք որ խիստ կարօտ են փոքր ինչ հասկանալ եկեցեցական կարգերը, որպէս զի մտադրութեամբ ժամ յաճախող և եկեղեցամէր լինին։ Մանուկը առ նուազը լաւ ծանօթ պէտք է լինի ծանագրութիւնի (նոյնպէս տօնացուցի և օրացոյցի) բովանդակութեան հետ և գիտէնայ նորա գործածութիւնը, իսկ այս նպատակի համար օգտաւէտ է ի ինկատի ունենալ, մինչև անդամ աշակերտի ձեռքին տալ, «Աղօթագիրը ըստ Ժամակարգութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Տ. Ք. Մկրեանի հրատարակութիւն», որոյ աւելի համառօտութիւնն է է «Աղօթագիրը պատկերազարդ ըստ Ժամակարգութեան երանտշնորհ Հայրապետաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Կ. Պոլիս»։

Պատարագի և ուրիշ արարողութեանց խորհուրդը այն չափով պէտք է քացատրուի և մեկնուի, որքան որ խորհուրդը պարզ երևում է համապատասխան երգերի, աղօթքների, աւետարանի ընթերցուածների, շարականների և արարողութիւնների յաջորդութիւններից և նոցա միաւորութիւններից։ Հայաստանեայց առոռուածպաշտութեան արարողութիւնները և ծեսէրը մեզ յիշեցնում են Քրիստոսի տնօրէնութիւնը, այս խորհուրդը պէտք է հասկանան մանուկները՝ գլխաւոր և ամենահական բացատրութիւնները ստանալով։ — Եկեղեցւոյ շինուածոյ մասանց, զարդարանների և զգեստների մասին տեղեկութիւնները այս տեղ ևս պէտք է մատակարարուին, եթէ առաջուանից պականներ է մնացել։

Դասերը պէտք է այնպէս կարգաւորուին, որ միշտ աշակերտները առաջիկայ կիրակի կամ տօն աւուր վերաբերեալ արտորողութեանց և Ժամերգութեանց պարզաբանութիւնը՝ կանխաւ լսեն ուսուցչից և այնպէս պատրաստուին Ժամ գնուլու։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹ. Թէ կրօնի ուսման բեղմնաւորութիւնը որքան կախուած է նոյն իսկ կրօնուսոյցի անձնաւորութիւնից, այս յայտնի է։ Եթէ աշակերտի մէջ նկատուի կեղծ բա-

րեպաշտութիւն, անխտրականութիւն, կրօնական հանգամանքների նկատմամբ կամ անտարբերութիւն, այդ ապացոյց է, թէ նա ինչ ծառի պտուղ է: Մանկանց ջերմեռանդութիւնը սնանկում է իւրեանց ուսուցչի սրտաբուխ և հոգեշունչ գասերով, ուր որ խօսում է ուսուցչի սիրտը և ոչ թէ բերանը:

Բնաւ ցանկալի չէ, որ մանուկները սովորեն շատ՝ բայց ձանձրութեամբ. նոցա համար կրօնի դասերը բարեպաշտական ժամեր պիտի լինին. նոքա այդ ժամանակ պէտք է ոգեւորուին, զուարթեանան, և ուրեմն երբէք դասը այն տեղ չը պէտք է հասնի, որ յօգնեցնէ նոցա մատաղ միտքը և նոցա վերայ ոյժերից վեր աշխատութիւն բարձէ:

Ասացինք, թէ կրօնը ուրիշ ուսմունքների կարգում տարբեր դիրք պէտք է բռնէ. բայց այս դիրքը ոչ թէ տրտաքին նախապատուութեան մէջ պէտք է երևի, այլ իրական հանգամանքներով: Ուրիշ ուսմունքների համար աշակերտը տան մէջ ամենայն օր պատրաստում է հետեւեալ օրուայ դասերը, իւր պատասխանների համար թուանշաններ կամ մրցանակ է ստանում, այդ թուանշանների ընդհանուր գումարին նայելով՝ հարցաքննելու իրաւունք է ստանում, և վերջապէս գալիս է քննութեան, որ այն տեղ որոշուի նորա բախտի վիճակը: Եթէ աշակերտը կրօնի դասերի ժամանակ էլ այսպէս վհատած և ունայնախոյզ լինի, եթէ այն տեղից էլ մի և նոյն երկիւղներ վասարակէ, նորա համար կրօնը միայն բերան սերտելու առարկայ կը դառնայ: Որպէս զի կրօնական ուսումը բարձրանայ, նա պէտք է կրօնական խորհուրդ դառնայ, աշակերտը փորձով պէտք է տեսնէ, թէ այն դասերում նորա յանդիման կանգնած է իւր հոգեսոր հայրը, աստուածային բանի և եկեղեցւոյ վարդապետը. այն ժամանակ նա չի ձգտի միայն բերան քաղելու, իսկ կրօնուսոյցը նորա համար հասարակ ուսուցիչ չի լինի,